ՀՀ վարչական դատարանին

(Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 23)

հայցվոր՝Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)

Հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հեռ. 091-40-78-36,

ՀՎՀՀ 02568394,

Գրանցման համար 211.171.01863/2003-06-13

Էլ. հասցե՝ foi@foi.am կայք՝ www.foi.am

Նախագահ՝ Շուշան Դոյդոյան

(Անձնագիր՝ BA3345189 տրված 26.06.2019թ., 011-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք□ Երևան, Արգիշտի փողոց 11/3, բն.51)

Հայցվորի ծանուցման հասցե՝ ք. Երևան, Ծարավ-Աղբյուրի 55/5, բն□260

Հեռ. 091-40-78-36

Պատասխանող՝ Երևանի քաղաքապետարան

(հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փող□1)

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ

(Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին տրամադրել տեղեկատվություն ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ)

Պատվարժան դատարան,

1.Գործի դատավարական նախապատմությունը

04.08.2021 թվականին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (այսուհետ նաև՝ Հայցվոր) կազմակերպությունը դիմում է Երևանի քաղաքապետարան ք□ Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում գտնվող հասցեի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Երեվանի քաղաքապետարանը պատասխանում է, որ այդ հասցեի հետ կապված որևէ լիազորություն չունի և կից ներկայացնում ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության որոշումը և կատարողական թերթը:

Հայցվորը 12.08.2021 թվականին կրկին է դիմում Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Պատասխանող) տեղեկատվությունն ավելի ստույգ ներկայացնելու նպատակով:Սակայն Պատասխանողը կրկին ներկայացնում է նույն պատասխանը:

Տեղեկատվության ստույգ պատասխան ունենալու նպատակով հայցում է իրականացվել 19.08.2021թվականին, սակայն նույն պատասխան է տրվել:

02.09.2021 թվականին ներկայացվել է վարչական բողոք, որը թողնվել է անպատասխան:

2.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

04.08.2021 թվականին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության կողմից հարցում է կատարվել Երևանի քաղաքապետարան տեղեկություն տրամադրելու՝ ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գտնվող Երևան քաղաքի համայնքային հողի վրա գործող քարի արտադրամասի վերաբերյալ:

Հայցվորի կողմից ներկայացված հարցման շրջանակներում առաջադրվել է հետևյալ հարցադրումները՝

1/ Տեղյակ է արդյո՞ք Երևանի քաղաքապետարանը ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում գտնվող քարի արտադրամասի անօրինական գործունեության մասին,

2/ Ի՞նչ քայլեր է ձեռնարկել/ձեռնարկում քաղաքապետարանը արտադրամասի անօրինական գործունեությունն անհապաղ դադարեցնելու նպատակով:

10.08.2021 թվականին Երևանի քաղաքապետարանը N 19/9833 թվականի գրությամբ Հայցվոր կողմից առաջադրված հարցմանը պատասխանել է հետևյալ կերպ.

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետի կողմից 29.07.2021 թվականի հ.եա-4631/02 գրությամբ Երևանի քաղաքապետարան է ուղարկվել Հարակդիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի կենտրոն և Նորք Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին, համաձայն որի որոշվել է. «Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/594105/21 վարչական գործով 28.07.2021 թվականի տրված կատարողական թերթի՝ արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գնվող շինության քանդում և /կամ ապամոնտաժումը»:

Միաժամանակ տեղեկացվել է, որ հիշյալ հասցեում գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու առումով՝ Երևանի քաղաքապետարանը լիազորություն չունի:

Վերոշարադրյալ գրությանը կցվել էր նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանի կողմից 29.07.2021 թվականի N Եա 4631/02 գրությունը, Հարկադիր կատարողի 29.07.2021 թվականի կատարողական վարույթ հարուցելու Եա 4631/02որոշումը և կատարողական թերթը:

12.08.2021 թվականի Հայցվորի կողմից 347-90 գրությամբ կրկին ներկայացվել է հարցում Երևանի քաղաքապետարան՝ տեղեկություն ստանալու վերաբերյալ:

Հարցմամբ Հայցվորի կողմից առաջադրվել է հետևյալ հարցադրումները.

«1. Ո՞ր պետական մարմնի լիազորությունն է համայնքի հողին պատկանող տարածքում անօրինական գործող արտադրամասի գործունեության կասեցումը կամ դադարեցումը,

2. Ու՞նի արդյոք քարի արտադրամասի տնտեսվարողը (Միքայել Սերգեյի Ղազարյանը Ա/Ձ) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը,

3. Ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն և ինչու անօրինական գործունեություն իրականացնող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել»:

Հարցմանը ի պատասխան 19.08.2021 թվականին Պատասխանողի կողմից ներկայացվել է նույնաբովանդակ այն պատասխանը, որը ներկայացվել էր 10.08.2021 թվականի գրությամբ, այն է՝Երևանի քաղաքապետարանը որևէ լիազորություն չունի գործողություններ կատարել վիճելի տարածքում: Նաև վկայակոչվել և Հայցվոր կողմին ուղարկվել էր ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության 29.07.2021 թվականի հ.ե-4630/02 գրությունը, որոշումը և կատարողական թերթը:

19.08.2021 թվականին Հայցվորի կողմից Երևանի քաղաքապետարան է ներկայացվել տեղեկություն ստանալու կրկնակի հարցում:

Հայցվորը, հիմք ընդունելով «Տեղեկատվություն ստանալու մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, խնդրել էր իրեն տրամադրել հավաստի և ամբողջական տեղեկատվություն:

Կրկնակի հարցման մեջ Հայցվորի կողմից հիմնավորվել է այն պնդումը, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները:Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական անգամ բոլոր առաջադրված հարցերին տալիս է նույանաբովանդակ պատասխան՝չանդրադառնալով մեր կողմից ներկայացված ոչ մի հարցի:

19.08.2021 թվականին Հայցվոր կազմակերպության կողմից իրականացվել է կրկնակի հարցում:

Ներկայացված կրկնակի հարցման մեջ առաջադրվել է հետևյալ հարցերը.

1.Ի՞նչ միջոցներ է ձեռնարկել Երևանի քաղաքապետարանը իր սեփականության ներքո գտնվող հողի վրա իրականացված քարի արտադրամասի գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու ուղղությամբ,

2.Ունի արդյո՞ք քարի արտադրամասի տնտեսվարողը համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր Երևանի քաղաքապետրանի կամ վարչական շրջանի հետ.

3. Ինչու՞ է Երևանի քաղաքապետարանի կողմից դրսևորվել անգործություն, և հստակ գործողություններ չի իրականացվել մինչև հարկադիր կատարման ծառայության կողմից որոշման կայացման պահը:

Կրկնակի հարցման մեջ ևս մեկ անգամ Հայցվորը խնդրել էր տրամադրել լիարժեք պատասխան՝ յուրաքանչյուր հարցին մանրամասն անդրադարձ կատարելով:

25.08.2021 թվականին Երևանի քաղաքապետարանի թիվ 19/105694 գրությամբ ստացվել է նույնաբովանդակ պատասխան, առ այն, որ Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանի կողմից 29.07.2021 թվականի N Եա 4631/02 գրությունը, Հարկադիր կատարողի 29.07.2021 թվականի կատարողական վարույթ հարուցելու Եա 4631/02որոշումը և կատարողական թերթը, որևէ լիազորություն չունի գործողություն կատարելու ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի հարևանությամբ գտնվող շինության քանդման և/կամ ապամոնտաժման աշխատանքներին:

02.09.2021 թվականին Հայցվոր Կազմակերպության կողմից ներկայացվել է վարչական բողոք:

Հայցվոր Կազմակերպությունը բողոքում անդրադրաձել էր այն հարցադրումներին, որոնց Երևանի քաղաքապետարանը, ըստ էության, չէր պատասխանել:

Բողոքում անդրադարձ է կատարվել այն խնդրին, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից տրամադրված պատասխանները չեն վերաբերում Հայցվոր Կազմակերպության կողմից ներկայացված հարցադրումներին, չեն տալիս ամբողջական պատասխան:

02.09.2021 թվականին ներկայացված Բողոքով նաև առաջադրվել է հարուցելու վարչական վարույթ՝ Երևանի քաղաապետարանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության նկատմամբ Հայցվոր Կազմակերպության 2021 թվականի օգոստոսի 12 և 2021 թվականի օգոստոսի 19-ի հարցումների ներկայացված պատասխանների իրավաչափությունը, տրամադրված պատասխանները «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման պահանջներին համապատասխանությունը որոշելու նպատակով:

02.09.2021 թվականին Հայցվոր Կազմակերպության կողմից ներկայացված վարչական բողոքը թողնվել է անպատասխան:

Հայցվորը 30.08.2021 թվականին դիմել է ՀՀ ՄԻՊ-ին՝ խնդրելով աջակցել հնարավորինս սեղմ ժամկետում ստանալու տեղեկատվություն՝ խախտված իրավունքի վերականգման գործում:

27.09.2021 թվականի ՀՀ ՄԻՊ-ը որոշում է կայացրել բողոքը քննարկման ընդունելու մասին:

3.Հայցի հիմքը և հիմնավորումները

Գտնում եմ, որ Հայցվորի կողմից ներկայացված հարցմանը և առաջադրված հարցադրումներին Երևանի քաղաքապետարանը չի պատասխանել օրենքով սահմանված կարգով, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: Իսկ տեղեկություններ ստանալու կարգը ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը,իսկ Օրենքի 12-րդ հոդվածը հստակ ամրագրում է տեղեկատվություն տնօրինողի պարտականությունները:

Այսպես, տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը.

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Հիմք ընդունելով վերոհիշյալ իրավակարգավորումները, հայտնում եմ, որ Պատասխանողի կողմից չի ապահովվել Հայցվոր Կազմակերպության կողմից առաջադրված հարցերի բովանդակալից պատասխանների ապահովումը, ինչի հետևանքով ներկայացված հարցերին տրվել է նույնիմաստ պատասխաններ:

Այսինքն, Հայցվոր կազմակերպության կողմից հարցմամբ առաջադրված հարցերից և ոչ մեկին հստակ պատասխան չի տրվել:

Հայցվոր Կազմակերպությունը, ինչպես նշվեց հայցի նկարագրական մասում, առաջադրել է Երևանի քաղաքապետարանին պատասխանել հետևյալ հարցերին.

1/ Տեղյակ է արդյո՞ք, որ ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում Երևան քաղաքի համայնքային նշանակության հողի վրա գործում է քարի արտադրամասը,

2/Ի՞նչ միջոցներ է ձեռնարկում Երևանի քաղաքապետարանը այդ գործունեությունը դադարեցնելու համար,

3/ Ունի արդյո՞ք տնտեսվարող Միքայել Ղազարյան Ա/Ձ-ն ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում գործունեություն իրականացնելու իրավունք, եթե այո, ապա տրամադրել նաև գործունեության իրականացման իրավական հիմքը,

4/Ինչո՞ւ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն և իր համայնքային հողի վրա իրականացված արտադրական գործունեությունը չի դադարեցրել,

5/ Եթե Երևանի քաղաքապետարանը իրավասու չէ, ապա ո՞ր պետական մարմնի լիազորությունների կամ իրավասության մեջ է մտնում համայնքային նշանակության հողի վրա իրականացված արտադրական գործունեությունը դադարեցնել:

Սակայն Պատասխանող կողմը 04.08.2021 թվականի, 12.08.2021 թվականի, 19.08.2021 թվականի հարցումներին ի պատասխան տվել է նույնաբովանդակ, իրարից որևէ կերպ չտարբերվող պատասխաններ, այն է՝ «Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանի կողմից 29.07.2021 թվականի N Եա 4631/02 գրությունը, Հարկադիր կատարողի 29.07.2021 թվականի կատարողական վարույթ հարուցելու Եա 4631/02որոշումը և կատարողական թերթը, որևէ լիազորություն չունի գործողություն կատարելու ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի հարևանությամբ գտնվող շինության քանդման և/կամ ապամոնտաժման աշխատանքներին»: Պատասխանին կից ներկայացվել է ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանի կողմից 29.07.2021 թվականի N Եա 4631/02 գրությունը, Հարկադիր կատարողի 29.07.2021 թվականի կատարողական վարույթ հարուցելու Եա 4631/02որոշումը և կատարողական թերթը:

Այսինքն, Պատասխանող կողմի ներկայացված պատասխաններից ակնհայտ է, որ Երևանի քաղաքապետարանը խուսափում է տրամադրել հավաստի տեղեկատվություն, տեղեկություն տրամադրելիս չի անդրադառնում հարցմամբ առաջադրված յուրաքանչյուր կետին:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ամրագրվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկատվության տրամադրման կարգը:

Համաձայն վերոհիշյալ Կարգի 5-րդ կետի, եթե պետական մարմինը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությանը վերաբերող մյուս տվյալները:

ՀՀ կառավարության կողմից նաև ամրագրվել է տեղեկատվություն հայցողի բոլոր հարցերին հստակ պատասխաններ տալու պահանջը:

Այսպես, Որոշման Կարգի 8-րդ կետի համաձայն՝ հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները:

Այսնինք՝ ամփոփելով վերոհիշյալը, հարկ ենք համարում նշել, որ Հայցվոր կազմակերպության կողմից 04.08.2021թ., 12.08.2021 թ., 19.08.2021 թ., և 02.09.2021 թվականներին առաջադրված էր հետևյալ հարցերը.

1/ Տեղյակ է արդյո՞ք, որ ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում Երևան քաղաքի համայնքային նշանակության հողի վրա գործում է քարի արտադրամասը,

2/Ի՞նչ միջոցներ է ձեռնարկում Երևանի քաղաքապետարանը այդ գործունեությունը դադարեցնելու համար,

3/ Ունի արդյո՞ք տնտեսվարող Միքայել Ղազարյան Ա/Ձ-ն ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում գործունեություն իրականացնելու իրավունք, եթե այո, ապա տրամադրել նաև գործունեության իրականացման իրավական հիմքը,

4/ Ինչո՞ւ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն և իր համայնքային հողի վրա իրականացված արտադրական գործունեությունը չի դադարեցրել,

5/ Եթե Երևանի քաղաքապետարանը իրավասու չէ, ապա ո՞ր պետական մարմնի լիազորությունների կամ իրավասության մեջ է մտնում համայնքային նշանակության հողի վրա իրականացված արտադրական գործունեությունը դադարեցնելը:

Հիմք ընդունելով վերոհիշյալ հիմնավորումները, պետք է նկատել որ Երևանի քաղաքապետարանի կողմից ոչ մի անդրադարձ չի կատարվել բարձրացված հարցերին, չեն տրվել հիմնավոր պատասխաններ: Այիսնքն, Որոշման բովադնակությունից հետևում է, որ Պատասխանողը պետք է առաջնորդվեր մեկ հարց-մեկ պատասխան սկզբունքով, որը չի կատարվել: Փոխարենը ամեն հացադրմանը տրվել է նույնաբովանդակ պատասխաններ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ ամրագված պահանջները:

<u>4.ՊԱՀԱՆՁԸ</u>

Պատվարժան Դատարան

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 68-րդ, 77-րդ, 78-րդ և 124-րդ հոդվածներով՝ ՀՀ վարչական դատարանից

Խ Ն Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

1 Հայցը ընդունել վարույթ, այն բավարարել,

2 Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին տրամադրել հայցված տեղեկատվությունը՝ ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ:

Ծանուցում: Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը 02.09.2021 թվականին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության կողմից Երևանի քաղաքապետին ներկայացվել է վարչական բողոք, որին, սակայն, վարչական մարմնի կողմից ընթացք չի տրվել:

Կից ներկայացվում է՝

1/ Պետական տուրքի վճարման անդորրագիրը,

2/ Հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանող կողմին ուղարկված լինելու վերաբերյալ փոստային անդորրագիրը,

3/«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»կողմից 04.08.2021 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված տեղեկություն ստանալու հարցման պատճենը,

4/Երևանի քաղաքապետարանի կողմից 10.08.2021 թվականին տրամադրած հարցման պատասխանի պատճենը,ՀՀ Ան Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի գրությունը, որոշումը և կատարողական թերթը,

5/«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից 12.08.2021 թվականին ներկայացված Երևանի քաղաքապետին ուղղված տեղեկություն ստանալու հարցման պատճենը,

6/ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված պատասխանի պատճենը, կից տրամադրված Հարկադիր կատարման ծառայության կողմից ներկայացված գրության, որոշման և կատարողական թերթի պատճենները,

7/ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից 19.08.2021 թվականին ներկայացված կրկնակի հարցման պատճենը,

8/ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված հարցման պատասխանի պատճենը,

9/ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից 02.09.2021 թվականին ներկայացված վարչական բողոքի պատճենը

10/«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից ՄԻՊ դիմած գրության և ՄԻՊ որոշման պատճեները:

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝

Շ. Դոյդոյան

01.11.2021թ.